


ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ՈՃ (ծագումը, դիզայնը և զարդարվեստը)»

Լույս է տեսել Վահան Վահանյանի և Գրիգոր Վահանյանի¹ հեղինակած «ՀԱՅԿԱԿԱՆ ՈՃ (ծագումը, դիզայնը և զարդարվեստը)» նոր մենագրությունը: Այն տպագրվել է 2017 թվականի ապրիլին **LAMBERT Academic Publishing** հրատարակչության կողմից Գերմանիայում:

Մենագրության մեջ հեղինակները ներկայացնում են իրենց տեսլականը հայկական զարդարվեստի ծագման, ձևավորման, զարգացման և էվոլյուցիայի հարցերի վերաբերյալ՝ սկսած քարե դարի ժամանակաշրջանից: Ժայռապատկերների, գաղափարագրերի, վիշապաքարերի և խաչքարերի, խեցեղենի, ճարտարապետության, հագուստի և գորգերի, կենցաղային պարագաների, զենքերի և միջնադարյան հայկական ձեռագիր մատյանների հետազոտման մեջ տեսողական և ճանաչողական մոտիվների ուսումնասիրությունը թույլ է տալիս վերհանել հայկական ոճը (այդ թվում՝ խաչերի, սվաստիկաների, վեցանկյուն և ութանկյուն աստղերի և բուսական, կենդանական ու առասպելական մոտիվներով զանազան այլ պատկերների նախատիպերը), որն իր ազդեցությունն է ունեցել կրոնական և հոգևոր սիմվոլիկայի և պատկերագրության մեջ մի շարք զարդարվեստների (եգիպտական, հունական, արաբական, կելտական, սկանդինավյան, թուրքական, պարսկական) ոճերի վրա: Մենագրության մեջ ներկայացված է հնագույն և ժամանակակից նախշերի և զարդարվեստի մի օրիգինալ հավաքածու, որը կարող է կիրառվել զանազան հավելվածներ ստեղծելու նպատակով կիրառական արվեստներում. դեկորատիվ ձևավորման, գրքերի, ինտերիերի և էքստերիերի դիզայնի, գորգերի, հագուստի և գործվածքների մոդելավորման, բեմական ձևավորման, ճարտարապետության, վեբ դիզայնի և համակարգչային դիզայնի, ֆիլմարտադրության և խաղերի ստեղծման, ինչպես նաև ճանաչողական բժշկական (նյարդահոգեբուժության) ախտորոշման մեջ: Հավաքածուն կարող է օգտագործվել նաև կրթության, ստեղծագործ վիրտուալ իրականության և կարողությունների զարգացման ոլորտներում:

Կարող եք ձեռք բերել «ՀԱՅԿԱԿԱՆ ՈՃ (ծագումը, դիզայնը և զարդարվեստը)» մենագրությունը՝ անցնելով հետևյալ հղումներով.

1. Amazon.co.uk
2. Amazon.com
3. Amazon.de
4. Booklooker.de
5. Buchkatalog.de
6. Bucher.de
7. Buchweb.de
8. Deutsche National Bibliothek
9. Ebay.de
10. Knigozal.com
11. MoreBooks
12. OmniScriptum GmbH & Co. KG
13. Tyrolia.at
14. Umbreit.de
15. Yosho.univcoop.jp
16. Zvab.com



¹ Վ. Վահանյանին շնորհվել է մագիստրոսի աստիճան Գրաֆիկական դիզայնի միջազգային ինստիտուտի (Ֆլորենցիա, Իտալիա) կողմից և արվեստագիտության թեկնածուի աստիճան՝ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում: Գ. Վահանյանը Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի պրոֆեսոր է և հանդիսանում է ժայռապատկերների հետազոտության «Քարե դարան» հայկական կենտրոնի հիմնադիրը և ղեկավարը: Նրանք հեղինակել են ավելի քան 200 գիտական հոդված և 9 մենագրություն: